

Հարցաշար
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
10-րդ դասարան – 180 րոպե

Ապրիլյան մի առավոտ իր շքախմբով դեպի Հռոմ ուղևորվեց հայոց արքա Տրդատ Մեծը՝ թագադրվելու Հռոմի կայսր Ներոնի ձեռքով: Երբ թագադրման ծեսն ավարտվեց, Տրդատը ցանկացավ շրջել շքեղաշուք մայրաքաղաքում: Հաստաբեատ մույթերին բազմած մարմարակոփ արձանները, գեղեցիկ դրվագներով գոտևորված անըստգյուտ տաճարները հիացմունք էին պատճառում: Մեծակառույց շենքերից մեկում, որտեղ աշխատում էին օրենսդիրները, դարակներին շարված էին հաստափոր օրենսգրքերը:

Երբ նստեցին ճաշի, Ներոնը՝ ոսկեբանված շքեղ պարեգոտով, բոսորավառ մույկերը հագին, հանդիսավոր բազմեց գահույթին և անսքող հեգնանքով դիմեց Տրդատին.

- Հայոց աշխարհո՞ւմ էլ այսքան շատ օրենքներ կան:

- Մեր օրենքներն այնքան էլ շատ չեն, սակայն լավն են, որովհետև ամփոփում են հայ մարդու ազնիվ ձգտումները, սերը, երազանքները, - համարձակ պատասխանեց Տրդատն ու հավելեց, - եթե հայը դրանք սրբությամբ պահպանի, հռոմեացին երբևէ չի հանդգնի մոտենալ բազում դարեր հարատևող մեր ոստանին:

- Որո՞նք են այդ օրենքները, որոնց մասին ես՝ Ներոնս, երբևէ չեմ լսել, - անքթիթ նայելով Տրդատին՝ հարցրեց հավակնոտ ու ամբարտավան այրը զարմանքով ու սրդողած:

- Առաջինն այն է, որ մեր **սուրը ժանգոտ լինի, իսկ մանգաղը՝ հայելու նման փայլուն**: Երկրորդը՝ **դատարանի դռանը մշտապես չորորված խոտ լինի բուսած, դրա փոխարեն տաճար տանող ճանապարհի կանաչը՝ ոտնահետքերից տրորված**: Երրորդը՝ մեզ պարտադրված կովի ժամին, խաղաղ օրերին :

1. Շարունակի՛ր տեքստի անավարտ նախադասությունները: (1 միավոր)
2. Մեկնաբանի՛ր տեքստում ընդգծված նախադասությունները: (3 միավոր)
3. Տեքստի ո՞ր հատուկ անունն է վերածվել հասարակ անվան: Ի՞նչ իմաստով է գործածվում: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
4. Գրի՛ր *մույթ, գոտևորել, անըստգյուտ, ոսկեբանված, պարեգոտ, մույկ, անսքող, անքթիթ, ամբարտավան, սրդողած* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
5. Տեքստից ընտրի՛ր բառային և քերականական համանուն ունեցող երկուական բառ և բացատրի՛ր: (1 միավոր)
6. Տեքստից ընտրելով արմատներ և ածանցներ՝ կազմի՛ր երկուական ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր բառեր: (2 միավոր)
7. Վերածի՛ր աշխարհաբարի և մեկնաբանի՛ր. «*Բազում են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք*» թևավոր խոսքը: (2 միավոր)
8. Բացատրի՛ր «*հաննիբալյան երդում*» և «*Հաննիբալը դարպասների մոտ է*» թևավոր խոսքերը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունները: (2 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Մտորումներ ճանապարհից առաջ» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)

Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի առաջադրանքների պատասխաններ

10-րդ դասարան

- ներոն –անասելի դաժան՝ անողոք մարդ. ծագում է Հռոմի կայսր Ներոնի անունից, որը պատմությանը հայտնի է իր բազմաթիվ չարագործություններով. նա անգամ այրել է Հռոմը, որպեսզի ներշնչվի և բանաստեղծություն գրի:
- մույթ –հենասյուն, հենարան, կամարակալ, նեցուկ, խարիսխ անըստգուտ- անթերի, կատարյալ, անկրկնելի, աննման, նմանը չունեցող ոսկեբանված – ոսկեգույն թելերով նախշված՝ պարեգոտ – պատմուճան, շքեղ թիկնոց՝ վերնագգեստ մույկ- մի տեսակ ոտնաման, կոշիկ, մուճակ անսքող – չթաքցրած, բացահայտ, առանց թաքցնելու, չթաքցնող գոտևորել – բոլոր կողմերից եզերել, շրջապատել անքթիթ – ակնդետ, ակնապիշ, սևեռուն ամբարտավան – գոռոզ, գոռոզամիտ, մեծամիտ, ինքնահավան, հավակնոտ սրդոդած – զայրացած, բարկացած, նյարդայնացած, սուր դողացնելով
- շրջել, դրվագ, սեր, այր, դար, սուր, ճաշի, կռվի, ձգտում, ճանապարհի
- Բազմաթիվ են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները: Նշանակում է՝ հավակնորդներ՝ ցանկացողներ շատ կլինեն, բայց արժանիներ՝ քիչ:
- հաննիբալյան երդում* – մինչև վերջ անհաշտ պայքար մղելու հանդիսավոր երդում, ծագումը. Հաննիբալը հորը երդվել էր Հռոմի դեմ Կարթագենի կռիվը մինչև վերջ հասցնել: *Հաննիբալը դարպասների մոտ է* – մոտալուտ մեծ վտանգ է սպառնում, ծագումը. Հաննիբալը, մի քանի երկիր գրավելով, սպառնացել է Հռոմին:

Գնահատման չափանիշներ

10-րդ դասարան

- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0,5 միավոր:
- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0,75 միավոր:
- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 7 միավոր:
- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 2 միավոր:
- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 25 միավոր: (Եթե սխալ է բացատրված՝ 0,1 միավոր):
- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 33 միավոր:
- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
- Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0,5 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: